ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ պետական եկամուտների կոմիտեի 2022 թվականի փետրվար ամսվա գործունեության վերաբերյալ

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2022 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 4,934.2 մլն դրամ՝ պլանավորված 4,300 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 14.7 տոկոսով կամ 634.2 մլն դրամով: Հավաքագրված եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գերակատարվել են 74.9 տոկոսով կամ ավել է հավաքագրվել 2,112.9 մլն դրամ:

Փետրվար ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 2,275.6 մլն դրամ՝ պլանավորված 1,800.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 26.4 տոկոսով կամ 475.6 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում հաշվառվել է թվով 101, լուծարվել՝ 8 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել են թվով 61 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 35-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 9-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման, 6-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 5-ը՝ լուծարային, 3-ը՝ ԱՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 19-ի N 336-Ա որոշմամբ հաստատված միջոցառման 8-րդ կետով նախատեսված վնասի չափի հիմնավորվածության ճշտության և 3 այլ ուսումնասիրություններ:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 8,693 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 8,588:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 43 պայմանագրեր:

Հաշվետու ամսում «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ կայացվել և ուժի մեջ են մտել հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների

գծով չկատարված պարտավորությունների գանձման 35 որոշումներ՝ 264.9 մլն դրամ գումարի չափով, ԱՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ներկայացվել հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չկատարված պարտավորությունների գանձման թվով 13 որոշումներ՝ 35.5 մլն դրամ գումարի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ԼՂՀ օրենսգրքով սահմանված կարգով քննված 23 վարչական գործով նշանակվել է 230.0 հազար դրամ գումարի չափով վարչական տուգանք:

Հարկ վճարողների ձեռնարկատիրական վարկերի (փոխառությունների) և տոկոսների փոխհատուցման նպատակով վճարված հարկերի գումարի վերադարձի ծրագրի շրջանակում հաշվետու ամսում կատարվել է 21 մլն դրամ գումարի չափով վերադարձ:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 6 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

2022 թվականի հունվար ամսվա ընթացքում ԱՀ տարածք են ներմուծվել 6,870.8 մլն դրամ գումարի չափով ապրանքանյութական արժեքներ, արտահանվել՝ 3,380.1 մլն դրամ գումարի չափով ապրանքանյութական արժեքներ:

ԱՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 19-ի N 336-Ա որոշման համաձայն՝ հաշվետու ամսում շարունակվել է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով կրած նյութական վնասի չափի վերաբերյալ տեղեկանք տրամադրելու նպատակով հարկ վճարողներից դիմումների ընդունման գործընթացը, որի շրջանակում տրամադրվել են 13 տեղեկանքներ, մերժվել՝ 2 դիմում:

ԱՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել ««Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը:

ԱՀ ՊԵԿ նախագահի հրամաններով սահմանվել են «Արցախի Հանրապետության տարածքում արտադրվող պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար «Թ» սերիայի դրոշմապիտակի նմուշը և տեխնիկական պահանջները» ու «Արցախի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով

հարկման ենթակա ալկոհոլային խմիչքի դրոշմավորման համար «2022» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշի նմուշը», որոնք ԱՀ կառավարության որոշմամբ 2021 թվականի մարտի 15-ից դրվել են կիրառության մեջ:

Փետրվարի 15-ին ԱՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի ղեկավարությամբ տեղի է ունեցել հաշվետու խորհրդակցություն, որին մասնակցում էր կոմիտեի ղեկավար անձնակազմը: Խորհրդակցության ընթացքում ամփոփվել են կոմիտեի 2021 թվականի ընթացքում կատարած աշխատանքներն ու նախանշվել 2022 թվականի անելիքները:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

Հաշվետու ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային կարգապահության բարելավման ծրագրի շրջանակում հաշվետու ամսում շարունակվել են հարկ վճարողների շրջանում հանրային իրազեկման աշխատանքները. բացատրական աշխատանքներ են տարվել շրջաններում հաշվառված հարկ վճարողների մոտ՝ գործունեությունը օրենսդրության պահանջներին համապատասխան կազմակերպելու վերաբերյալ, տրամադրվել 540 անհատական իրազեկման թերթիկներ:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի և զանգվածային այլ լրատվամիջոցներով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները, հրապարակվել հարկ վճարողների կողմից առավել հաճախ բարձրացված հարցերի պատասխան-պարզաբանումները:

Պատրաստվել և զանգվածային լրատվամիջոցներին է ներկայացվել հարկային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար կազմակերպվելիք բաց և փակ մրցույթների վերաբերյալ հայտարարությունը:

«Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ԱՀ օրենքին համապատասխան՝ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամից վերադարձ ստանալու նպատակով պատրաստվել և վարձու աշխատողներին ու անհատ ձեռնարկատերերին է տրամադրվել վճարված դրոշմանիշային վճարների չափի մասին թվով 835 տեղեկանք:

Փետրվար ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 411, ելքագրվել՝ 365 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրության դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 1 գրություն: